

ՆՈՐԱՔԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓԱՎԱՏՈՍ ԲՈՒԶԱՆԴԻ
«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿՈՒՄ

Ոճագիտության մեջ նորաբանություններ են համարվում «բառային այն միավորները, այն նոր բառերը, արտահայտությունները և իմաստները, որոնք լեզվի տվյալ փուլում գիտակցվում են որպես նոր իրողություններ, դեռևս չեն մտել գործուն բառապաշարի մեջ, դեռևս չունեն ընդհանուր տարածում, լայն և հաճախակի կիրառություններ, իսկ առանձին դեպքերում նույնիսկ չեն արձանագրվել տվյալ լեզվի համապատասխան բառարաններում»¹: Ինչպես հայտնի է, նորաբանությունները լեզվի զարգացման, բառապաշարի թարմացման և հարստացման գործում կարևոր դեր են խաղում: Լեզուն իր զարգացման ընթացքում անընդհատ համալրվում է նոր բառերով՝ նոր հասկացությունների երևան գալուն զուգընթաց: Լեզվում արդեն եղած շատ բառեր էլ նոր իմաստներ են ձեռք բերում: Ժամանակի ընթացքում առաջացած այն նորաբանությունները, որոնք լայն գործածություն են ձեռք բերում, ձուլվում են տվյալ լեզվի բառային կազմին և դադարում են նորաբանություն լինելուց, իսկ նրանք, որոնք կազմությամբ և իմաստով լիարժեք չեն, լեզվում չեն ամրանում:

Լեզվաբանները նորաբանությունների մեջ որպես առանձին բառերի խումբ առանձնացնում են հեղինակային նորակազմությունները, որոնք ստեղծվում են հեղինակների կողմից՝ ստեղծագործության ոճավորման, պատկերավոր և ավելի դիպուկ արտահայտվելու, խոսքն ավելի ազդեցիկ դարձնելու, նաև նոր իմաստներ կամ իմաստային նոր նրբերանգներ արտահայտելու համար: Սովորաբար, այս կարգի նորակազմությունները լեզվում լայն տարածում չեն գտնում:

Մեր քննության նյութը Փավստոս Բուզանդի «Պատմութիւն Հայոց» երկում առկա նորաբանություններն են: Այս հարցին անդրադարձել է նաև լեզվաբան Վ. Առաքելյանը², սակայն կան չլուսաբանված հարցեր: Փավստոս Բուզանդի երկից առանձնացրել ենք 415 նորաբանություններ, որոնցից 367-ը վկայված են ՆՂԲ-ում³, իսկ 48-ը դուրս են մնացել ՆՂԲ և «Ուծեռն»⁴ բառարաններից:

1. Բառեր, որոնք վկայված են ՆՂԲ-ում

ա. Գոյականներ

¹ Լ. Եզեկյան, Հայոց լեզվի ոճագիտություն (ուս. ձեռնարկ), Եր., 2003, էջ 134:

² Տե՛ս Վ. Առաքելյան, Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության, Եր., 1981, էջ 167:

³ Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, Եր., 1979:

⁴ «Ուծեռն» բառարան Հայկազեան լեզուի, Վենետիկ, 1865:

ինչպես հայտնի է, բառակազմական տեսակետից նորաբանությունների առանձնահատկությունն այն է, որ դրանք հիմնականում բաղադրյալ կազմություններ են՝ ստեղծված բարդության և ածանցման միջոցով: Այս առումով բացառություն չեն նաև Փավստոս Բուզանդի «Պատմութիւն Չայոց» երկուն առկա նորաբանությունները, որոնց մեջ հատուկ ենտ են պարզ բառերը՝ թակ (59)⁵, գազ (161), ցուղ (27), նրան (196), ճետ (41) ևն: Բավականին մեծ թիվ են կազմում իսկական բարդությունները, որոնցից երեքը միայն անհոդակապ իսկական բարդություններ են՝ բանբեր (75, 201), լոյսիջոյց (171), խոտորկտուր (223), մյուսները ս հոդակապով իսկական բարդություններ են՝ աղանադոշ (57), աւարամասն (159), խաղակատակ (228), կաղամբավաճառ (48), գանձահատ (91), վերնագաւառ (119), փղակոյտ (47) ևն: Նկատելի է, որ որոշ բարդություններում կրկնվում է երկրորդ բաղադրիչը՝ գօր - ագատագօր (47), աշխարհագօր (37), բազմագօր (17), կալ - բերդակալ (150 ...), բազմակալ (57), կողմակալ (136), վարսակալ (226), վիճակակալ (35), պետ - անդերծապետ (133), գամապետ (205), երիցապետ (83, 8), նուիրակապետ (53) ևն:

Նախածանցավոր բառերը երկուսն են՝ կազմված չ ժխտական նախածանցով՝ չերեց (105), չեպիսկոպոս (83, 76, ...):

Վերջածանցավոր գոյական նորաբառերը բավական շատ են աւարություն (13), ըռժղություն (228), կծկութիւն (8), այրենոց (192), դարմանոց (64), վկայանոց (86, 87), անտառակ (33), դաշտանիկ (64), պատկառուկ (28), քսիք (99), կնգմենի (223), ագատանի (45), խնդանք (100), ապրղուն (91), աւազայնի (216), հացուտ (33) ևն:

Կան նաև այլ կազմությամբ ածանցավորներ. երկիւղուկ (142), սպանուղութիւն (149), արտառութիւն (93), չկամութիւն (43) ևն:

Բարդ ածանցավոր նորաբառ գոյականների մեջ ավելի մեծ թիվ են կազմում $(SjS)a^6$ ենթակաղապար ունեցողները. ազգահատութիւն (2), գաղտագողանք (99), խոստաբանութիւն (1, 219), նենգախօսութիւն (43), շաղաշատութիւն (90) ևն: Այլ կազմությամբ բարեսացութիւն (21), պատուիրանաւանդութիւն (70), սուտերդմութիւն (64), ստացուածաշատութիւն (7) ևն:

Բուզանդի երկից վեր ենք հանել նաև բարդ ածանցավոր նորաբառեր, որոնցում նախածանցի դերում հանդես են եկել նախդիրները. ցայգապաշտօն (100), յառաջեպիսկոպոս(32), յառաջակարգութիւն (32), գայլոցկերութիւն (105):

բ. Ածականներ

⁵ Օրինակները վերցված են Փավստոս Բուզանդի «Պատմութիւն Չայոց»-ի Ս. Պետերբուրգի 1883 թ. հրատարակությունից:

⁶ Բառակազմական կաղապարները վերցված են Լ. Հովսեփյանի «Գրաբարի բառակազմությունը» (Եր., 1987) աշխատությունից: S - սկզբնահիմք, S¹ - քերականական ձևավորում ունեցող հիմք, a - ածանց, j - հոդակապ:

Ածանցավոր ածական նորաբառերը հիմնականում վերջածանցավոր են՝ բաժանաւոր (224), սանդաղաւոր (33), շորիկ (44), ճարտուկ (43), դանդաչուն (71): Նախածանցավոր են՝ անընտիր (31), անմուրուս (215), տարակաց (196), տարապայման (65): Երկու բառ բազմաբարդ են՝ մեծասքանչելաշուք (62), ուղղափառհաւատ (76):

Սեծ է ածական բարդութիւնների թիվը: Դրանց մեջ փոքրաթիվ են *անհողակապ* բարդութիւնները. աղանազգի (56), աշխարհաւեր (8), ոսկեպատեան (58), ռամիկսպաս (45), սրտկեղ (93) ևն: Գերակշռող մասը *հողակապով իսկական բարդութիւն* է հատկապէս հետևյալ երկու ենթակաղապարներով. *SjS* – աշխարհատեր (8...), երախտապարզ (79), թագագանգուր (59), խորգահանդերծ (225), յորդահեղեղ (29), սարաբարծր (33), տղայահանճար (197), *SjS'* – անապատակեաց (224), աշխարհակորոյս (45), աշխարհապաղատ (47), բարիատուր (79), խորանապահ (45), կատաղախօս (44), նոյնազգեաց (62), պատուիրանակատար (80) ևն: Որոշ արմատներ բառակազմութեան ժամանակ Փափստուն օգտագործել է մի քանի անգամ: Այսպէս՝ որպէս բառի առաջին բաղադրիչ կրկնվում են հետևյալ արմատները՝ աշխարհ՝ 7, մանուկ՝ 2, նախ՝ 2 անգամ: Որպէս բառի վերջին բաղադրիչ կրկնվող արմատների թիվն ավելի մեծ է՝ զգեց (2), խորհուրդ (2), կալ (2), կիր (2), հանդերծ (3), հար (2), նշան (2), շէն (2), պահ (2), տուր (3):

գ. Բաւեր

Բուզանդի գրքում կան նաև բայ-նորաբառեր, ինչպէս՝ դորսովեմ (78), ճապատեմ (132), մահեմ (79), ջայլիմ (103), յաղկիմ (42), այգեման (15), անմարդիմ (95), անճիտեմ (109), սխաղակիմ (97), իգանամ (132), ապագնամ (71), փաղփաղիմ (152) ևն: Սրանց հետ ենք ներկայացնում նաև անցյալ դերբայ-նորաբառերը՝ աթինեալ (223), ամօթապարտեալ (83), այգորեալ (114), աւեղկեալ (60), դեսպանագնացեալ (43), դամդայեալ (120) ևն:

«Պատմութիւն Հայոց» երկում կան մի շարք հարադրավոր բայեր, որոնք նույնպէս նորաբանութիւններ են: Ավելի մեծ թիվով հարադրութիւններ են կազմվել *առնել* բայով. ազգատ առնեմ (109), անմի առնեմ (169, ...), զօրանիստ առնեմ (199), խանգար առնեմ (107, ...) ծիսհալած առնեմ (127), նետալից առնեմ (130), ործակոտոր առնեմ (177): *Լինել* բայով՝ թոպանահ լինիմ (28), խաղակատակ լինիմ (228), խօթապատճառ լինիմ (87): Այլ բայերով՝ երկս արկանեմ (198), աշխար կոծ դնեմ (218), լակիշ (դակիշ) ածեմ (144):

Նկատելի է, որ այս հարադրավոր բայերի մի մասը ժողովրդական ծագում ունի, ինչպէս՝ մարդակոտոր առնեմ (46), կապակոտոր լինիմ (111), կողաքակ լինիմ (106) ևն:

դ. Սակրայներ

Բուզանդի երկից քաղել ենք նաև տարբեր կազմութեան մակրայ-նորաբառեր՝ արծակ արծակ (111), վաղվաղ (82), յայլակարծուց (45),

յառաջամուխ (164), ձիահալած (127), աւագօրէն (97), վարագօրէն (214), զկնիագոյն (83), յետագոյն (98), ընջովին (82), յետուստ (69):

ե. Այլ իմաստային երանգներով գործածված բառեր

«Պատմութիւն Հայոց» երկուն Բուզանդը որոշ բառեր գործածում է ոչ առաջնային իմաստներով: Այդ բառերի հիմնական մասը գոյականներ և ածականներ են, սակայն կան նաև բայեր.

խառն (որպէս պատառոկ կամ մաս). ...Սերկացաւ և եցոյց զի քան զդրամ *խայծ* ոչ գտանէր որչ ի մարմնի նորա՝ զոր խոցեալ էր ի պատերազմի (217):

չառակեղ (որպէս ժանտախտ). Եւ սկսաւ հատանել զոր *չարակեղն* իմն կոչեն, իսկ կէսքն ժանդ անուանեն (95):

քափին (որպէս երթալ, հասանել). Չոգաւ *քափեցաւ* յերկիրն արուացաստանի դէմ յանդիման նըծքնացոց քաղաքին, որ էրն տեղի ճակատուն պատերազմին (111):

անառմատ (որպէս անբերրի). Եւ յայնմ կղզւոջ ոչ գտանէր ոչ ջուր ըմպելոյ և ոչ դոյզն ինչ արմատս, զի *անարմատ* աւագ միայն էր (77):

մթին (որպէս ճգնողական). Եւ էր անդ եղբայր մի խստակրօն, որ *մթին* վարս վարէր (188):

զ. Փոխառութիւններ

Բուզանդի «Պատմութիւն Հայոց» երկուն կան 30-ից ավել բառեր, որոնք փոխառութիւններ են առաջին անգամ գործածված Բուզանդի կողմից: Դրանք կարելի է բաժանել երեք խմբի: Առաջին խմբում այն բառերն են, որոնք փոխառված են հունարենից և փոքրաթիվ են արքեիդական (նշ. ավագ սարկավագ, 100)⁷, էնկոմիա (նշ. ներքող, 61), սակուր (նշ. կապար, 196), սիւնհոդոս (նշ. եկեղեցական ժողով, 63), ստրատ (նշ. բանակի զլխավորը, 168), փիւղակէ (նշ. ժահեստ, բանտ, 74, 86):

Երկրորդ խմբում այն բառերն են, որոնք հիմնականում փոխառված են պարսկերենից և ավելի մեծ թիվ են կազմում. ամիճ (նշ. մսից պատրաստված խորտիկ, 174), աորուշան (նշ. արևապաշտների կրակարան, 119, 152), բաշխիշ (նշ. պարգև, նվեր, 159), ժանուար (նշ. գահավորակ բարձրագույն ջորու, ծիու կամ փղի վրա, 199), լակիշ (կամ *ղակիշ*, նշ. զորագունդ կամ ճակատ, ճամբար, 144), խրասախ (չափի միավոր է, 202), կարևան (նշ. ճամփորդների խումբ կամ բանակ, 158), ճենիշ (նշ. արտաքնոց, 200), մաշկապաճեան (47) և մաշկաւարզան (159, պարսից թագավորական վրանը, ըստ Աճառյանի ճիշտ գրութեան ձևը *մաշկապարճէն*), շաւակի (150, ըստ Աճառյանի ճիշտը պիտի *արշաւակի* լինի), պատմունճակ (նշ. պատմունճանների պահարան, 172),

⁷ Արմատներն ստուգված են Հր. Աճառյանի «Հայերէն արմատական բառարան»-ով, հ. I-IV, Եր., 1971-1979:

պէշասպիկ (նշ. սուրհանդակ, 48, մինչդեռ ՆՅԲ-ը մեկնում է որպէս փոքրիկ ծի), ռահվիրայ (նշ. ճանապարհ բացող կամ պահող, կամ ուղևոր, 45), վաշտ (նշ. զորագունդ, 100), վաշտկան (նշ. զինվոր, 163), փշտիպան կամ փուշտիպան (նշ. քիկնապահ, 139, 140):

Երրորդ խմբում ընդգրկված են Բուզանդի երկուս եղած մի քանի փոխառյալ բառեր, որոնց ծագումը կասկածի տեղիք է տալիս: Այդ բառերն են առողջի (ըստ Աճառյանի նշ. է առանձին, հատուկ, ըստ ՆՅԲ-ի ամառանոց, հով տեղ, 97), ապիզակ (զարդ է, 207), բռշոպ (նշ. է խռովահույզ, խառնակ, 210), գարգմանակ (ըստ ՆՅԲ-ի նշ. է սաղավարտի կամ խուլրի գարդ, ըստ այլ կարծիքի գլխանոց կամ սաղավարտ վրան արծիվ, 207), գուգազ (ըստ ՆՅԲ-ի նշ. է քաջերի ու հսկաների ամբոխ, 15, 17), կոտինդ (ըստ Աճառյանի նշանակությունն անհայտ է, ըստ ՆՅԲ-ի նշ. է խաղողի կամ չամչի հատ, 182), յուրան (Աճառյանը կարծում է, որ նշ. է ցորենի դեզ, ըստ ՆՅԲ-ի նշ. է բրգածն աման կամ մառան, 92), վաշկատուն (նշ. է վրանաբնակ, քոչվոր, 14):

Նշենք, որ Բուզանդն իր երկուս օտար, փոխառյալ արմատներից կազմել է նոր բառեր⁸: Այսպէս *եպիսկոպոս* արմատից կազմում է եպիսկոպոսանոց (41, 42), եպիսկոպոսակից (6), քորեպիսկոպոսութիւն (32), արքեպիսկոպոսապետ (62), *դեհկան*-ից դեհկանութիւն (56), *մաշկ* և *նափորտ* արմատներից մաշկանափորտ (33):

Է. Անվանական բառակառուցություններ

Բուզանդի երկուս մի քանի անվանական բառակապակցություններ կան, որոնք նորաբանություններ են *դրան երեց* (104), *Հայր մարդպետ* (97, ...), *նախնամէջ պար* (71), *հաղ քան գհաղ* (132), *ընդ այգս այգոյն* (86):

ը. Առձեռն բառառանում զոանգված բառեր

Բուզանդի «Պատմութիւն Հայոց» երկից առանձնացրել ենք մի շարք բառեր, որոնք չկան ՆՅԲ-ում, սակայն գրանցված են «Առձեռն»-ում: Այս բառերը ևս, որոշ վերապահությամբ, համարում ենք նորաբանություններ⁹:

I. Գոյականներ - բաժակալ (196), գետախառնունք (98), եկեղեցախորան (100), եղէզնաբերան (16), երամակակայ (213), հայակողմն (142), զրկութիւն (28, ...), վատանունութիւն (132), բարուցք (102), բաս (203), գուն (12), զինդկապետ (պարս. փոխառություն է, նշ. է զինվորական աստիճան, 53) ևն:

II. Ածականներ - դրօշաւոր (111), բաներթուկ (198), իրաքաջ (57), կանանցահանդերծ (97), կարճագատ (42), ճերմակածի (159), քրիստոնէամիտ (224) ևն:

III. Դերբայներ - գերփող (91), գնացող (226), գիտելի (185), գմածեալ (71):

⁸ Այս հարցին անդրադարձել է նաև Վ. Առաքելյանը իր վերը նշված աշխատության մեջ, էջ 169:

⁹ Հմարավոր է, որ այս բառերից որևէ մեկը գործածած լինի Բուզանդից առաջ հանդես եկած որևէ հեղինակ:

2. Բառեր, որոնք զտանցված չեն ՆՅԲ-ում և Առձեռն բառարանում

Բուզանդի «Պատմութիւն Յայոց» երկից դուրս ենք գրել 48 բառային միավորներ, որոնք զրանցված չեն ո՛չ ՆՅԲ-ում, ո՛չ Առձեռն բառարանում: Դրանց հիմնական մասը զոյականներ և ածականներ են:

ա. Գուականներ - նորաման (92), տեսունաշակերտ (7), դարք (50, 51), մուրտաստան (102), ազգատոհմութիւն (16), աղբատակեցութիւն (34), արգասութիւն (218), հապաղութիւն (67), անակիւղ (հուն. փոխառ., նշ. է կարճ պարեգոտ, հանդիպում է նաև անկիւղ ձևով, որն Աճառյանը ճիշտ չի համարում, 152), մնդաւար (պարս. փոխառ., նշ. է զինվորական աստիճան, 53), սորակալ (պարս. փոխառ., նշ. է ախոռապետ, 105, ցանկում կա *զորակալ* ձևով, Աճառյանն ուղղում է *ստորակալ*), բանական (պարս. փոխառ., ըստ Աճառյանի՝ ճիշտ ձևն է *բանուկան*, նշ. է պալատական տիկիներ, 48), տապրիկ (ըստ Աճառյանի՝ թերևս հատուկ անուն է, 125):

բ. Ածականներ - բարեկաց (179), բարենշան (218), իրափառ (56), կաշառաւել (76), հայատակ (141), յանձնիր (113), նախագիտելի (1), ստադատ (91), տառապելատր (80) ևն:

գ. Բառեր-բռնաբօսեն (երկու օրինակում՝ բռնագբօսեն, 139), սրտմտեցուցանեն (44), փաղոտեն (172), դերբայներ՝ հանկուցիչ (183), յղելի (9):

դ. Սակեաներ - Սրանց հիմնական մասը բառասկզբում *հ* նախդիր ունեցող կազմութիւն է. յանիմաստս (92), յանպատրաստից (45, ...), յառաջուն (178), յետմահու (224) ևն:

Այսպիսով, Փափստոսի նորակազմութիւնները հիմնականում հողակապով իսկական բարդութիւններ են:

Նորաբանութիւնները Փափստոս Բուզանդի երկում զործածված բառապաշարի ինը տոկոսն են կազմում:

Օգտագործած գրականութեան ցանկ

1. Զր. Աճառյան, *Յայերէն արմատական բառարան*, հ. I-IV, Եր., 1971-1979:
2. Վ. Առաքելյան, *Սկնարկներ հայոց գրական լեզվի պատմութեան*, Եր., 1981:
3. *Առձեռն բառարան Յայկագնեան լեզուի*, Վենետիկ, 1865:
4. Լ. Եգեկյան, *Յայոց լեզվի ոճագիտութիւն (ուս. ձեռնարկ)*, Եր., 2003:
5. Լ. Դովեմիլյան, *Գրաբարի բառակազմութիւնը*, Եր., 1987:
6. *Դամաբարբառ Փափստոսի Բուզանդացոյ «Պատմութիւն Յայոց», Ս. Պետերբուրգ, 1883*, Գիրք I-III, Եր., 1974-1978:
7. *Նոր բառգիրք Յայկագնեան լեզուի*, Եր., 1979:
8. Պ. Պողոսյան, *Խոսքի մշակութիւն և ոճագիտութեան հիմունքներ*, Գիրք I, Եր., 1990:
9. *Փաստոսի Բուզանդացոյ «Պատմութիւն Յայոց», Ս. Պետերբուրգ, 1883*: